ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

11 հունիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

77
(2927)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՀՖՖ-Ն ՖՈՒՏԲՈԼԸ ՀԵՏԻՆ ՊԼԱՆ Է ՄՂԵԼ

Շատ ենք խոսել, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության ոչ պրոֆեսիոնալ, հաճախ զարմանք առաջացնող գործելաոճով հայկական ֆուտբոլը անդունդն է գլորվում: Պետությունից ստանալով հսկայական գումարներ՝ ՀՖՖ-ն սկսել է սպորտային միջոցառումներ հյուրընկալել ու դրանց անցկացման համար պետբյուջեից՝ հարկատուների հաշվին հարյուր միլիոնների գումարներ ստանալ, իսկ այդ միջոցառումներն ուղղակի կապ չունեն ֆուտբոլի զարգացման հետ: Օրինակ՝ ՀՀ կառավարությունը, մարտի 7-ի որոշմամբ, ՈՒԵՖԱ-ի ֆուտզալի Չեմպիոնների լիգայի եզրափակիչ մրցաշարի անցկացման նպատակով ԿԳՄՍՆ-ին փոխանցեց 279 մլն 954 հազար դրամ: Մրցաշարը կայացավ, եզրափակիչ հանդիպումը մարդաշատ էր, սակայն կիսաեզրափակիչները՝ ոչ այնքան: Հասկանալի չէ, թե ինչու այդքան մեծ գումարներ տրվեց պետության կողմից մի միջոցառման, որը, մեծ հաշվով, ոչինչ չէր տալու: Իհարկե, միջոցառման կազմակերպիչները պատկառելի գումարներ աշխատեցին, բայց ֆուտբոլը չզարգացավ ու Հայաստանի ֆուտբոլային հեղինակությունը չաճեց: Հարց է օրինակ՝ եթե այդքան գումար տրամադրվեր սպորտային այլ ֆեդերացիայի, ապա ինչքան դրական արդյունքներ կունենային. բայց ոչ՝ պետությունը միշտ պատրաստ է «անհասկանալի» գումարներ շաղ տալ որեւէ արդյունք չտվող ֆուտբոլի ֆեդերացիային, որտեղ որոշիչ պաշտոններում են ՀԺ-ի նախկին լրագրող Արմեն Նիկողոսյանը ու այժմ ՀՖՖ նախագահի պաշտոնը զբաղեցնող, նախկին լրագրող Արմեն Մելիքբեկյանը: Վերջինս, ի դեպ, ջերմ անձնական հարաբերություններ ունի ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հետ, որը կառավարությունից խնդրեց այդքան մեծ գումար: Հիմա էլ ՀՖՖ-ն Production-ի վերածած Արմեններն իրենց հիմնական գործը ու հավաքականների խայտառակ ելույթները թողած՝ նոր զբաղմունք են գտել, այն է՝ Վրաստանի հետ համատեղ 2029 թվականին անցկացնել աշխարհի երիտասարդական առաջնությունը: Իհարկե, հաճելի է խոշոր միջոցառում հյուրընկալելը, սակայն պետությունը պետք է պարզաբանի, թե ինչու հարկատուների հաշվին խոշոր գումարներ է տալիս հատկապես ՀՖՖ-ին, ու որտեղ է հաշվարկը, ուսումնասիրությունը, որով պարզ կդառնա այդ գումարների արդյունավետությունը, դրա նպատակահարմարությունը եւ արդոք ինչ ընկերություններ են մասնակցելու միջոցառումների կազմակերպմանը, շինարարական աշխատանքներին եւ այլն:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



Ինչ «Հայփոստ» ՓԲԸ-ն գահավիժում է՝ արձանագրելով աստղաբաշխական վնասներ, այնտեղ հանգրվանած ՔՊ պատգամավորի կինը հերթական ֆինանսական «բարձունքն» է ապահովում: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ Հայկ Կոնջորյանի կնոջ տարեկան աշխատավարձը «Հայփոստում» 2021-ին 6.8 միլիոն դրամ էր, 2022-ին՝ 9.5 միլիոն, ապա 2023-ին՝ արդեն 10.5 միլիոն դրամ: Ի դեպ, Շուշան Ալեքսանյանի աշխատավարձը 6 անգամ գերազանցում է կազմակերպության 3064 աշխատակիցների միջին աշխատավարձը, որոնց տարեկանը 1.8 միլիոն դրամ է՝ Ալեքսանյանի 10.5 միլիոնի համեմատ: Հիշեցնենք, որ Փաշինյանը իշխանության եկավ «թալանից փրկելու» լոզունգներով: Հ.Գ. Հիշեցնենք, որ «Հայփոստ» ՓԲԸ 100% բաժնետերը ՀՀ կառավարությունն է:

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման ակտիվությանը զուգահեռ՝ ՀՀ քննչական կոմիտեում շարունակվում է քննչական կոմիտեի ԱԱԾ քննիչների պաշտոնների բարձրացման գործընթացը: Երեկ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի հրամանով՝ արդարադատության երկրորդ դասի խորհրդական Գեւորգ Հայրապետյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի՝ պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության երկրորդ վարչության պետ՝ ազատվելով նույն վարչության պետի տեղակալի (ՀԿԳ ավագ քննիչ) պաշտոնից: Թե նշանակումները ինչ հետեւանք կունենան ակցիայի մասնակիցների գործողությունների վրա, ցույց կտան իրադարձությունները: Փաստ է մեկ բան՝ նախաքննական մարմինը ուժեղացնում է դիրքերը նոր պաշտոնների նշանակումներով:

Հշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունում որոշում կա՝ ընդդիմության նախաձեռնած կառավարության հրաժարականի օրակարգով նիստին քվորում չապահովելու ու նիստը տապալելու: Այսպիսով, ինչպես արդեն հայտնել ենք, երեկ ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները հունիսի 11-ին կառավարության հրաժարականի եւ նոր կառավարություն ձեւավորելու օրակարգով արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությամբ էին հանդես եկել: ԱԺ խորհրդի նիստին, սակայն, ՔՊ-ն միաձայն մերժեց այսօր արտահերթ նիստ հրավիրելու նախաձեռնությունը: Օրենքի ուժով՝ արտահերթ նիստը կկայանա հաջորդ երկուշաբթի՝ հունիսի 17-ին: Արդեն իսկ կա ԱԺ նախագահի կարգադրությունն այդ մասով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ երեկ՝ ԱԺ խորհրդի նիստից հետո, ՔՊ-ն խմբակցության նիստի ժամանակ եւս այս հարցը քննարկել է: Հայկ Կոնջորյանը հայտարարել է, որ իրենց օրակարգում կառավարության հրաժարականի հարց չկա. ուստի այդ օրը չեն գնա եւ քվորում չեն ապահովի, այսինքն՝ կտապալվի նիստը: Ընդ որում, ՔՊ-ում տարաձայնություններ այս մասով չեն էլ եղել, բոլորը միաձայն այն կարծիքին են եղել, որ ընդդիմության նախաձեռնած նիստը՝ կառավարության հրաժարականի հարցով, չպետք է կայանա, որքան մարդ ուզում է հավաքվի փողոցում:

ԶՐՈՒՅՑ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐՃ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ». ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հունիսի 9-ին՝ ժամը 18:30-ին, Հանրապետության հրապարակում մեկնարկեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման վճռորոշ հանրահավաքը:

Շարժման մասնակիցները երթով շարժվեցին դեպի Բաղրամյան պողոտա եւ լարված իրավիճակից ու վիճաբանությունից հետո գիշերեցին Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկների հատվածում:

ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի հետ: Զրուցել ենք իշխանական պատգամավորների հայտարարությունների, իմպիչմենտի գործընթացի, «Շարժման» պահանջների եւ այն հաջողելու քայլերի մասին:

-Պարոն Մանուկյան, հունիսի 9-ին Բագրատ Սրբազանը հայտարարեց, որ իմպիչմենտի եւ Նիկոլ Փաշինյանին անվստահություն հայտնելու նախագիծը արդեն իսկ Ազգային ժողովի օրակարգ պետք է մտնի. սակայն, եթե նույնիսկ օրակարգ մտնի, պետք է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից 18 ձայն եւս: Ինչպե՞ս եք պատրաստվում իրագործել այս նախագիծը եւ հասնել արդյունքի:

-Իրականում հանրային տրամադրությունների արտահայտությունն է դա: Հունիսի 9-ին արդեն «Հայաստան» ու «Պատիվ ունեմ» խմբակցությունների պատգամավորները ստորագրել են այդ օրակարգի համար, այսօր (խմբ.)՝ ժամը 16:00-ին, կայանալու է Ազգային ժողովի խորհրդի նիստը, եւ այդ օրակարգով Ազգային ժողովի օրակարգում արտահերթ նիստ գումարելու առաջարկն է լինելու, բայց, կրկնում եմ, հանրային ճնշում, հանրային տրամադրությունների ազդեցությունը, վստահ եմ՝ ՔՊ-ում էլ լավ հասկանում են: Սա հերթական փորձերից մեկն է՝ այս ամբողջ ընթացքը կասեցնելու: Բոլոր գործիքակազմերը պետք է օգտագործվեն:

-Պարոն Մանուկյան, իշխանական պատգամավորները հունիսի 9-ին՝ երթի ընթացքում էլ պարբերաբար ծաղրում էին, ասում էին՝ «Մեկ անգամ՝ մեկ ժամ ժամանակ տվեցին Նիկոլ Փաշինյանին, հետո ավելացրին 15 րոպե, հիմա՝ 96 ժամ...ինչի՞ համար են հիմա այստեղ սպասում, եթե նախկինում տրված ժամանակներն այդպես էլ արդյունք չունեցան»:

-Գիտեք, նրանցից մեծ մասն այն տարիքում է որ չի ունեցել քաղաքական լուրջ կենսագրություն, նրանք չեն տեսել թե մի քանի տարի առաջ ինչ է կատարվել Հայաստանում: Ես իմ քաղաքական գործունեության 30 եւ ավելի տարիների ընթացքում այնպիսի ամբարտավան իշխանությունների եմ տեսել, որոնք մի գիշերվա մեջ այնպես են ճամբարափոխ եղել, որ դժվար է անգամ պատկերացնել: Ինքս 1991 թվականից քաղաքական գործընթացների մեջ եմ, երբ այդ տարի Բաղրամյան պողոտայում նստացույց էր, մասնակցում էի այդ ակցիային եւ ընդամենը 21 տարեկան էի:

Պարզապես գործող իշխանության ներկայացուցիչներից շատերի քաղաքական կենսագրությունն այնքան կարճ է, որ չունեն այդ հիշողությունը:

-Այսինքն՝ չե՞ն կարող բավարարող մեկնաբանություն տալ ստեղծված իրավիճակին:

-Ոչ, պարզապես մի ամբարտավանություն է մտած իրենց մեջ, որ փուչիկի նման ամեն վայրկյան կարող է պայթել:

-Պարոն Մանուկյան, ընթերցեմ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներից մեկի հայտարարությունը՝ ժամեր առաջ (խմբ.) հրապարակված. Սոնա Ղազարյանն է գրել: «Ո՞վ կմտածեր, որ հենց հերթական նիստերի հայտարարության ժամը կարելի էր ներկայացնել շարժման հանգուցալուծում՝ արտահերթ նիստ

ԱԺ կանոնակարգ սահմանադրական օրենք Հոդված 40 Հերթական նիստերի ընթացքը

3) հերթական նիստերի երեքշաբթի օրվա վերջին հիմնական նիստում, որի ընթացքում պատգամավորները կարող են հանդես գալ հայտարարություններով...»

-Ներողություն եմ խնդրում, այդ պատգամավորը երիտասարդ կին է, ամոթ է պարզապես... Սրբազանի լեզվական սայթաքումը, հասարակ վրիպակն էր պարզապես պատճառը, որ ժամային այդ գրաֆիկն է նշել. սակայն դա դարձնել ֆեյսբուքյան «ստատու՞ս, մի՞թե դա քաղաքական գործչի մակարդակի գործողություն է:

Լավ կլիներ այս պարագայում ավելի լուրջ դրսեւորեին իրենց:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԱՌԱՔԱՐԿԸ ՄԵՐԺՎԵՑ, ԲԱՅՑ ՆԻՍՏԸ ԿԿԱՅԱՆԱ

«ԱԺ խորհրդի մեծամասնության կողմից հերթական անգամ մերժվեց մեր առաջարկը»: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը:

«Ոչ մի հիմնավորում չկար, մենք ասել ենք, որ այս իրավիճակը քննարկման համար անհրաժեշտություն է, որովհետեւ մեր ժողովրդի մի մասը դժգոհ է այս իշխանությունից՝ելնելով նրանից, որ իշխանությունները չեն կատարում 2021-26 թթ. կառավարության ծրագիրը: Նախագիծը մերժվել է, բայց իրավունքի ուժով որպես արտահերթ նիստ այն կայանալու է ամսի 17-ին », - ասաց Օհանյանը:

Վերջինս նշեց, որ ունեցել են 27 ստորագրություն, ինչը խնդիրներ չի ստեղծել, իսկ բացակա պատգամավորները չեն մասնակցել, քանի որ հուղարկավորության են մասնակցել:

ՇԱՐԺՈՒՄԸ ԹԱՓ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՊՐՈՑԵՍՈՒՄ Է

«Համբերություն է պետք, որ շարժումն ունենա հաջողություն». այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց «Այլընտրանքային նախագծեր» խմբի անդամ Վահե Հովհաննիսյանը:

«Ստրատեգիական համբերությունը շատ կարեւոր է, եթե մենք ունենանք համբերություն, հաջողություն ունենալու ենք: Հայաստանում ստեղծվել է լուրջ ճգնաժամ, ստեղծվել է լուրջ ներհանրային, տոքսիկ մթնոլորտ եւ ստեղծվել է լուրջ լարվածություն մեր սահմաններին, ու այս ճգնաժամը պետք է հաղթահարվի: Ճգնաժամի հաղթահարման միակ ճանապարհը նոր իշխանությունն է: Նոր սոլիդ իշխանություն, որը կփորձի խաղաղություն բերել երկրի ներսում եւ սահմաններին»,- ասաց Հովհաննիսյանը:

Նրա խոսքով՝ «շարժումն» ընթանում է բավականին գրագետ: «Ես կարծում եմ՝ «շարժումը» դինամիկ թափ հավաքելու պրոցեսում է եւ դեռ չի հասել իր պիկին, ունի կոնսոլիդացիոն մեծ ռեսուրս, նոր սոցիալական շերտեր են միանալու»,- նշեց նա:

Ինչ վերաբերում է իշխանությանը, Հովհաննիսյանը նշեց, որ այս շարժումը նրանց համար լավ շանս է՝ սահուն, անցնցում, խաղաղ, բանակցային ճանապարհով իշխանության հանձնման համար: «Այս երկրին ո՛չ ցնցում է պետք, ո՛չ արյուն, ո՛չ նոր լարվածության փուլեր են պետք: Եթե նրանց հաշվարկը շարժումը ինչ-որ պահից մարելն է, բա դրանից հետո ի՞նչ է լինելու, դրանից հետո լինելու է ռադիկալիզացիա», - ասաց նա:

Ըստ նրա՝ շարժման նկատմամբ նաեւ բավականին դրական արտաքին ֆոն կա:

«ՀԱՄՆԵԼՈՒ ԵՆՔ ԼՈՒԾՄԱՆ». Հ. ՄԱՄԻՋԱՆՅԱՆ

Մերժման համար որեւէ տրամաբանական պատճառաբանություն չի բերվել բացառությամբ մեկի:

Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը՝ անդրադառնալով ԱԺ խորհրդակցական նիստի ժամանակ ընդդիմադիր խմբակցությունների՝ արտահերթ նիստ անցկացնելու առաջարկին:

«Իրենք համարում են, որ մեր երկրում ամեն ինչ նորմալ է: Գյուղեր են հանձնվում, մարդիկ են փողոցում ծեծվում, մարդիկ դառնում են քաղբանտարկյալ, ու դա իրենց համար նորմալ է: Միայն մեկ լուծում կա. իրենք պիտի լսեն ու կլսեն, որ երկրում ամեն ինչ նորմալ չէ՛ ու հաշվի կնստեն ժողովրդի ցանկության հետ: Դրա պատասխանը դրսում Բագրատ Գալստանյանը տալիս է: Այս առաքելությանն այլընտրանք չկա», - ասաց Մամիջանյանը:

Անդրադառնալով Սրբազանի՝ 96 ժամում հարցը լուծելու մասին հայտարարությանը, Մամիջանյանն ասաց. «Մինչեւ այդ շատ ջրեր կարող են հոսել, գուցե 96 ժամ հետո հարցը դեռ լուծված չլինի, բայց ակնհայտ լինի, որ հասնելու ենք լուծման»:

ԿԱՆԽԵԼ Է ՊԵՏՔ ԱՐԱՏԱՎՈՐ ԸՆԹԱՑՔԸ

«Մենք այլեւս չենք խոսելու սահմանազատում, սահմանագծում տերմիններով: Հայրենիք հանձնելու մասին է այս ամբողջ պատմությունը»: Այս մասին երեկ՝ հունիսի 10-ին, Բաղրամյան պողոտայում ցուցարարներին ասաց Բագրատ Սրբազանը:

«Եթե չկանխենք, շարունակաբար է դառնալու. Վերին Ոսկեպար, Ազատամուտ են հասնելու: Ամեն ինչ հանձնելու են իրենց աթոռը պահելու համար: Սա մեր երկրի պատկերն է: Կասեցնելու պահանջը մեկն է՝ այս մարդու հեռացումը», - հավելեց նա:

«Երկուշաբթի օրով՝ աշխատանքային ժամին այսքան մարդու ներկայությունը արդեն իսկ վկայում է այն մասին, որ մեր երկրում փոփոխությունների գործընթացները չեն ավարտվելու: Ի հեճուկս բոլոր զազրախոսների՝ չեն ավարտվելու: Դուք այնքան խորությամբ եք այդ ցավը հասցրել մարկանց, այնքան բազմակողմանի, որ այդ գործողությունների ընթացքը չի ավարտվելու», - ասաց նա՝ նշելով, որ իրեն չի հուզում, թե ինչ վերագրումներ են անում իշխանության ներկայացուցիչները:

«Թող ասեն, որ մարդկանց բախումների ենք տանում: Բախում հրահրողն էլ եք դուք, անօրեն գործողն էլ եք դուք, մարդկանց խաբած՝ քվեով այդ փափուկ աթոռներին հայտնվածն էլ եք դուք», - ասաց նա:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿԿԱՆԳՆԵՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՎՏԱՆԳԻ ԱՌԱՋ

Լեհաստանը Ռուսաստանը դիտարկում է որպես սպառնալիք, որը չի կարելի անտեսել, Վարշավայում լրագրողների հետ զրույցում ասել է երկրի արտգործնախարար Ռադոսլավ Սիկորսկին:

Արեւմտյան առաջնորդները վերջերս հայտարարեցին, որ լրջորեն քննարկում են ՆԱՏՕ-ի սահմանային երկրների վրա՝ Ռուսաստանի հարձակման սպառնալիքը:

Սիկորսկին համաձայն է այս մտահոգությունների հետ: «Եթե Ուկրաինան ընկնի, Լեհաստանը եւ Բալթյան երկրները ռուսական հարձակման անմիջական սպառնալիքի առաջ կկանգնեն»,- ասել է նա: Նրա խոսքով՝ Լեհաստանի իշխանությունները սկսել են ամրացնել սահմանը եւ պաշտպանության վրա ծախսում են ՀՆԱ-ի 4 տոկոսը:

Անցյալ շաբաթ, արտասահմանյան լրագրողների հետ զրույցում, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը «անհեթեթություն» անվանեց ՆԱՏՕ-ի երկրների վրա հարձակվելու՝ Ռուսաստանի ծրագրերի մասին խոսակցությունները:

Խոսելով Ռուսաստանի հետ ապագա հարաբերությունների մասին՝ Սիկորսկին ասել է, որ «Լեհաստանի իշխանությունները բոլոր ռուսներին չեն նույնացնում Պուտինի ռեժիմի հետ» եւ «չեն կորցրել հավատն ապագայում ժողովրդավարական Ռուսաստանի ի հայտ գալու հարցում»:

«Ռուսաստանը միշտ կմնա մեր ամենամոտ հարեւանը, եւ մենք հուսով ենք, որ այն կլինի խաղաղ եւ բարեկամական հարեւան», - ընդգծել է Լեհաստանի արտգործնախարարը:

ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ 90 ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ԳՐԱՆՑՎԵԼ

Շվեյցարիայի նախագահ Վիոլա Ամհերդը հայտնել է, որ Ուկրաինայի հարցով խաղաղության գագաթնաժողովին մասնակցելու համար գրանցվել է 90 պետություն: Այն տեղի կունենա Շվեյցարիայի Բյուրգենստոկ քաղաքում հունիսի 15-16-ը, գրում է kommersant.ru-ն:

«Այսօրվա դրությամբ գրանցվել է 90 երկիր, որոնց կեսը Եվրոպայից եւ Հյուսիսային Ամերիկայից են, մյուս կեսը՝ Հարավային Ամերիկայից, Աֆրիկայից, Մերձավոր Արեւելքից եւ Ասիայից», - ասել է Ամհերդը:

Ընդհանուր առմամբ, հանդիպմանը հրավիրվել է ավելի քան 120 պետություն, այդ թվում՝ G7-ի, ԲՐԻԿՍ-ի եւ G20-ի ներկայացուցիչներ: Ռուսաստանը գագաթնաժողովին հրավիրված չի, ինչի պատճառով էլ Կրեմլն անօգուտ է համարում առաջիկա իրադարձությունը:

Չինաստանը հրաժարվել է այցելել՝ պնդելով Ռուսաստանի մասնակցությունը: Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը Չինաստանի արտգործնախարար Վան Յիի հետ բանակցությունների ժամանակ շնորհակալություն է հայտնել Պեկինին՝ Ուկրաինայի հարցով շվեյցարական գագաթնաժողովին չմասնակցելու որոշման համար: Նախարարները հանդիպել են Նիժնի Նովգորոդում ԲՐԻԿՍ-ի արտգործնախարարների հանդիպման շրջանակում:

ՎՃՌՈՐՈՇ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ՝ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Հանրապետության հրապարակում «շարժման» առաջնորդ Բագրատ Սրբազանը հայտարարեց. «Աժ ընդդիմադիր խմբակցությունները հունիսի 11-ին ժամը 16:30-ին նախաձեռնում են խորհրդարանի արտահերթ նիստ կառավարության հրաժարականի եւ նոր խորհրդարան ձեւավորելու օրակարգով»:



Նա Հանրապետության հրապարակում ակցիայի մասնակիցներին ներկայացրել է քայլերի հաջորդականությունը.

«Հասկանում ենք, որ հուսալով այս մարդկանց բարոյական վերջին նշույլների վրա՝ խնդիրը լուծել չենք կարող: Մենք այս պահին պետք է որոշում ընդունենք, մենք կարող ենք խնդիրը լուծել, եթե վաղվանից սկսած՝ ընդամենը 4 օր, 96 ժամ, առանց դադարի, առանց աշխատանքի գնալու, առանց հանգստի, առանց երկար-բարակ քնելու, լինենք փողոցում եւ մեր կամքը պատադրենք:

Այս մարդուն առաջարկել ենք հրաժարական տալ, հանդիպել ու քննարկել. քննարկել անցնցում հեռանալու պայմանները, որոնք անտեսվել են: Ես ձեր առջեւից՝ այստեղ կանգնած, դիմում են ԱԺ բոլոր խմբակցություններին: Մեր պահանջով՝ ԱԺ ընդդիմադիր պատգամավորները, խմբակցությունները նախաձեռնում են խորհրդարանի նիստ հունիսի 11-ին՝ 16:30-ին կառավարության հրաժարականի եւ նոր կառավարություն ձեւավորելու օրակարգով», - ասաց Բագրատ Սրբազանը:

Նրա խոսքով՝ հունիսի 10-ին ԱԺ-ի խորհուրդը ժողովրդի որոշմամբ՝ պարտավոր է որոշում ընդունել արտահերթ նիստ հրավիրելու մասին. քաղաքական մեծամասնությունը, ՔՊ պատգամավորները պարտավոր են ենթարկվել ժողովրդի կամքին, գործել անձնական խղճով եւ համոզմունքով: Բագրատ Սրբազանը ներկայացրեց նաեւ երրորդ քայլը. «Համաժողովրդական պահանջի հիման վրա՝ խորհրդարանը իր արտահերթ նիստով հավանություն է տալիս գործող կառավարության հրաժարականին եւ նոր կառավարություն ձեւավորելու որոշմանը»:

Բագրատ Սրբազանի առաջնորդած «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը հայտարարություններից հետո քայլերթով շարժվեց դեպի Բաղրամյան պողոտա: Իրավիճակը կտրուկ լարվեց Բաղրամյան, Դեմիրճյան եւ Պռոշյան փողոցների հատվածում: Լեզվակռիվ եւ վիճաբանություն սկսվեց Բագրատ Սրբազանի եւ ՀՀ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի միջեւ: Ոստիկանական ուժերը արգելեցին Ազգային ժողովի պատգամավորներին մտնել խորհրդարան՝ ասելով, որ սա իրենց անվտանգության համար է արվում:

Իրավճակը լարվեց, քայլերթի մասնակիցները որոշում կայացրին գիշերել Ազգային ժողովի հարակից՝ Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկների հատվածում:

ԱԺ-ի դիմաց գիշերը, համեմատաբար, խաղաղ էր անցել. քաղաքացիները շարունակում են մնալ վրաններում:

Երեկ՝ հունիսի 10-ին ԱԺ խորհուրդը մերժեց ընդդիմադիր պատգամավորների ներկայացրած միջնորդությունը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻ ՃԵՊԱԶՐՈՒՅՑԻՆ

«Ալեն Սիմոնյանի երեկվա ճեպազրույցը նման էր դավադրության մեջ ներքաշված, բայց դեռեւս պատասխանատվության չենթարկված մարդու «հաթաթաների»»: Այս մասին facebook-ի իր էջում երեկ գրել էր պաշտպանության նախկին փոխնախարար Արտակ Զաքարյանը:

«Արտաքին քաղաքական թեմաների վերաբերյալ նրա ճամարտակություններին չարժե անդրադառնալ, քանի որ դրանց հետեւանքները առավել քան ողբերգական են: Հենց իրենց «վարած արտաքին քաղաքականությունն» է նաեւ պատճառներից մեկը, որ Նիկոլի ու ՔՊ վարկանիշը վախվորած թաքնվել է ոստիկանության վահանների հետեւում:

Ժողովրդի մասին Ալենի դատողությունները եւս կեղծ են ու անիրատեսական: Ժողովրդի ճնշող մեծամասնությունն այլեւս իրենց հենարանը չեն: Գուցե ժողովրդի մի մասը նաեւ ընդդիմության հետ չեն, բայց հաստատ ծափահարելով տոնելու են կապիտուլյացիայի եւ նսեմացման դեմ պայքարող ժողովրդական հատվածի հաղթանակը:

Քաղաքական օրակարգերի մասով՝ Ալենը կրկին սխալվում է: Կյանքը ցույց է տալիս, որ հենց ընդդիմությունն ունի հրապարակված օրակարգ՝ բաղկացած մի քանի կետերից: Իսկ Նիկոլի եւ Ալենի քաղաքական օրակարգի բացակայությունն ակնառու է. ադրբեջանական միակողմանի պահանջների կատարում, խաղաղության խոստման ձախողում, հայկական կամ խաղաղության խաչմերուկի ֆիկցիա (չգոյություն), քարուքանդ եղած ասֆալտապատում եւ ոստիկանության ռեսուրսից կառչած իշխանություն:

Ալենը իր ճեպազրույցում Բագրատ Սրբազանին «իրավունք վերապահեց» աղոթքներ հնարել: Կարծում եմ՝ վատ խորհուրդ չէ, որովհետեւ Քրիստոնեությունն այնքան ներողամիտ եւ հումանիստական հավատք է, որ գուցե նաեւ հայրենիքի դեմ գործած դավադրության ապաշխարհության աղոթք եւս պետք է ունենա: Գուցե:

Ինչ վերաբերում է Սերժ Սարգսյանի եւ Ռոբերտ Քոչարյանի «մերժված լինելու» մասին Ալեն Սիմոնյանի հերթական դատողություններին՝ ապա պետք է խորհուրդ տամ՝ պլաստինկան փոխե՛ք: Արդեն չեն աշխատում ձեր մանիպուլյացիաները: Հայ ժողովրդին խաբելու եւ մոլորեցնելու ձեր ռեսուրսները վաղուց սպառվել են: Ժամանակն արդարեցրել ու ցույց է տվել, թե ով ի՞նչ է արել մեր երկրի ու ժողովրդի համար», - գրել է Զաքարյանը:

ՀՀ–ԱՄՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԸ

Հունիսի 11-ին Երեւանում տեղի կունենա ՀՀ-ԱՄՆ ռազմավարական երկխոսության ամփոփիչ նիստը:

ՀՀ ԱԳՆ-ից տեղեկացնում են, որ նիստի շրջանակում ՀՀ ԱԳՆ-ում կկայանա ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ ԱՄՆ պետքարտուղարի՝ Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալ Ջեյմս Օ՛Բրայենի հանդիպումը, որին կհաջորդի երկխոսության՝ երկու երկրների պատվիրակությունների մասնակցությամբ ընդլայնված կազմով անցկացումը:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

ԽԱԽՏՎԵԼ ԵՆ ՊԱՇՏՊԱՆՅԱԼՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

2024թ. հունիսի 10-ին կայացավ Վահան Քերոբյանի պաշտպաններ Տիգրան Եգորյանի եւ Վաչե Սիմոնյանի մամուլի ասուլիսը, որը վերաբերում էր Վահան Քերոբյանին վերաբերող քրեական գործի ներկա ընթացքին:

Պաշտպան Տիգրան Եգորյանը ներկայացրեց, որ ութ մեղադրյալներից վեցի նկատմամբ քրեական գործը դադարեցվել է: Հինգ մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է գործուն զղջման հիմքով, իսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Գնումների բաժնի պետ Աննա Ղարիբջանյանի նկատմամբ գործը կարճվել է՝ արդարացման հիմքով:

Պաշտպան Վաչե Սիմոնյանը ներկայացրեց, որ Վահան Քերոբյանի նկատմամբ մեղադրանքը փոփոխվել է եւ էապես աղքատացել է փաստական հանգամանքների շարադրումը՝ հաշվի առնելով, որ մեղադրյալներից մեկը, ով պատասխանատու էր գնումների ողջ գործընթացի օրինականությունն ապահովելու համար, արդարացվել է:

Փոփոխվել է նաեւ պատճառված վնասների նկարագրությունը. եթե նախկինում նկարագրված «վնասները» ոչ գույքային էին եւ երեքն էին՝ պետության համար խիստ անհրաժեշտ հանրային ներդրումային ծրագրերի բանկի չստացում, էկոնոմիկայի նախարարության համբավի վնասում եւ «Հարմոնիա» հիմնադրամի իրավունքների ոտնահարում, ապա նոր մեղադրանքում մնացել են միայն վերջին երկուսը:

Պաշտպանը նաեւ նշեց, որ դատախազությունն իր քրեական հետապնդումները դադարեցնելու որոշումներով խոստովանում է, որ այս վնասները մտացածին են, քանի որ մեղադրյալներից ոմանք նույնիսկ ֆորմալ առումով չեն զղջացել եւ որեւէ մեղադրյալ չի հատուցել «հասցված վնասը», որը պարտադիր պայման է գործուն զղջման հիմքով քրեական հետապնդումը կարճելու համար: Դատախազությունը նաեւ ընդունում է, որ չկա հանրային վտանգավորություն: Ըստ էության, մեղադրող կողմն այժմ պատանդ է իր կողմից նախկինում արած հայտարարություններին:

Պաշտպան Տիգրան Եգորյանը նշեց, որ նախաքննության մարմնի կողմից արված աշխատանքը խիստ ցածրորակ է եւ մտահոգիչ, եւ պաշտպանական կողմը ցավով, բայց անհամբերությամբ սպասում է, թե երբ գործը կգնա դատաքննության փուլ, որտեղ հնարավորություն կընձեռնվի հրապարակել գործը եւ ցույց տալ այն բոլոր խախտումներն ու ապօրինությունները, որը թույլ է տրվել նախաքննության փուլում:

Պաշտպանը չբացառեց, որ այդ ապօրինությունների վերաբերյալ հաղորդում կներկայացվի:

Պաշտպանները նաեւ նշեցին, որ Վահան Քերոբյանն արդեն չորս ամիս է, ինչ տնային կալանքի տակ է այն հիմքով, որ վերջինս կարող է միջամտել գործի քննությանը, ինչը անհեթեթություն է՝ հաշվի առնելով, որ բոլոր այն անձինք, ում վրա կարող էր ազդել Վահան Քերոբյանը, արդեն չեն ենթարկվում քրեական հետապնդման: Պաշտպանները նաեւ նշեցին, որ նախաքննության ընթացքում բազմիցս խախտվել են Վահան Քերոբյանի, ինչպես նաեւ մյուս անձանց իրավունքները:

Անդրադառնալով գործում առկա փաստական հանգամանքներին՝ պաշտպանները նշեցին, որ գործում առկա չէ գեթ մեկ փաստական հանգամանք, որը կվկայեր, որ Վահան Քերոբյանը չարաշահել կամ վերազանցել է իր լիազորությունները կամ գործել է ընդդեմ պետական կամ ծառայողական շահին: Հակառակը, առկա են բազում համոզիչ տվյալներ, որ բոլոր գործող անձինք առաջնորդվել են բացառապես պետական եւ ծառայողական շահով եւ չեն չարաշահել իրենց լիազորությունները: Այդ պարագայում, նախաքննական մարմինները համառորեն առաջ են տանում իրենց առաջնային վարկածը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԱԼՈՒԽՆԵՐԻ ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

Հունիսի 6-ին ոստիկանության Մուշի բաժին հաղորդում էր տվել բջջային օպերատորներից մեկի աշխատակիցը եւ հայտնել, որ հունիսի 4-ից հունիսի 6-ն ընկած ժամանակահատվածում Գյումրի քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցում գտնվող դիտահորից գողացել են ԲԲ ընկերությանը պատկանող մալուխները:

Ոստիկանության Մուշի բաժնի քրեական հետախույզները, ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, պարզել են, որ գողությունը կատարել է նույն փողոցի բնակիչ 40-ամյա տղամարդը: Հունիսի 7-ին նա ներկայացվել է Մուշի ոստիկանության բաժին, որտեղ խոստովանել է, որ դիտահորից գողացել է մալուխները, տեղափոխել իր տան բակ, ապա այրելու միջոցով՝ վերածել պղնձի եւ հանձնել գունավոր մետաղների ընդունման կետ:

40-ամյա տղամարդը, գունավոր մետաղների ընդունման կետի սեփականատերը եւ գողոնը ներկայացվել են վարույթն իրականացնող մարմին:

«000 ՕՕ 00» ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐՈՎ «ՎՈՅԱԺՆԵՐԻ ՄԵՋ Է»

Մարտի 13-ին ՊԾ Երեւան քաղաքի գնդում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ «Mercedes G 63» մակնիշի «000 ՕՕ 00» համարանիշի ավտոմեքենայի վարորդը այն վարում է ոչ սթափ վիճակում:

Տեղում Երեւանի գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի, գումարտակի հրամանատար Արսեն Ստեփանյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Դավիթ Նիկողոսյանի եւ վաշտի հրամանատար Վլադիմիր Դերձյանի գլխավորությամբ պարեկները դուրս են գալիս ենթադրյալ երթուղու վայր ու ժամը 00:45-ի սահմաններում Թեւոսյան փողոցում նկատում են կասկածելի մեքենան:

Պարեկները կգնեցնում են այն, եւ վարորդը սթափության փորձաքննության է ենթարկվում ու պարզվում է, որ նա մեքենան վարել է ոչ սթափ՝ խմածության ամենաբարձր աստիճանի վիճակում:

Ինչպես արդեն գրել էինք, համարանիշները պատկանում է Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի հորը՝ Գագիկ Առուշանյանին:

Մենք տեղեկացանք, որ Առուշանյանը մեկ տարով զրկվել է ավտոմեքենա վարելու իրավունքից:

Եվ ահա, մեկ տարի մեքենա վարելու իրավուքից զրկված Առուշ Առուշանյանը Երեւանում «000 ՕՕ 00» համարանիշի ավտոմեքենայով «վոյաժների» մեջ է:

ԼՈՒՐԵՐ

ՈՎ Է ԿՅԱՆՔԻՑ ՋՐԿՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Երեւանի կենտրոնում՝ Սարյան փողոցում, որտեղ անցկացվում է «Գինու փառատոնը», դանակահարություն է տեղի ունեցել, ինչի հետեւանքով կա սպանված: ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ մահացածը 2005 թվականին ծնված Աշոտ Քոչարյանն է:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վիճաբանությունը սկսվել է այն բանից հետո, երբ փառատոնի մասնակիցներից մեկը հայհոյել է. իրավիճակը լարվել է ու հայհոյանքի պատճառով սկսվել է վիճաբանություն եւ 19-ամյա երիտարասդին դանակահարել են: Այս պահին իրավապահները փորձում են գտնել սպանության ենթադրյալ կատարողին:

ՔԿՀ-ՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՀԱՆՁՆՈՒՔՆԵՐԸ

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից շարունակվում է պայքարը քրեակատարողական հիմնարկներ թմրամիջոցների եւ արգելված իրերի ներթափանցման, ինչպես նաեւ ազատազրկված անձանց կողմից դրանց պահման եւ ապօրինի շրջանառության դեպքերը բացահայտելու եւ կանխելու ուղղությամբ:

Ըստ այդմ՝ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ վարչության տարածքային բաժինների եւ քրեակատարողական հիմնարկների անվտանգության ապահովման ծառայողները 2024 թվականի մայիսի ընթացքում ազատազրկված անձանց համար բերված հանձնուքներից, տեսակցությունների եկած քաղաքացիների անձնական զննությամբ, ԱԹՍ-ի միջոցով ներներետված, ինչպես նաեւ ազատազրկված անձանց անձնական զննությամբ, խցերում, բնակելի գոտու այլ հատվածներում պատրաստված թաքստոցներից հայտնաբերել են 74 903 գրամ թմրամիջոցների նմանվող զանգվածներ, 144 բջջային հեռախոս, բջջային հեռախոսի 149 պարագա, 14 wi-fi սարք, 10 կտրող-ծակող առարկա, 77,3 լիտր ինքնաշեն ոգելից խմիչք եւ արգելված այլ իրեր:

Թվարկված բոլոր դեպքերով նախաձեռնվել են համապատասխան վարույթներ, նշանակվել են դատաքիմիական փորձաքննություններ:

ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՏԻՆԳՆ Է ԿԱՐԵՎՈՐԸ

Փաստաբան Լիպարիտ Սիմոնյանը հայտնեց, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ոստիկանները հրաժարվում են տնային կալանքի տակ գտնվող անձին ուղեցնել բժշկական կենտրոն՝ պատճառաբանելով, որ «միտինգներով» պայմանավորված՝ ծանրաբեռնված են:

Ոստիկանության համար անձի առողջական վիճակը որեւէ նշանակություն չունի. կարեւորը «միտինգի» վայրում գտնվել է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 7-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 150 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐՔ

ՈՐՔԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ Է ՏՐՎԵԼ

Կիրանց գյուղի բնակչուհի Խանում Թամրազյանի տունը համագյուղացու՝ Միեր Սիմոնյանի տան նման սահմանազատման հետեւանքով անցնելու է Ադրբեջանին: Միեր Սիմոնյանը քանդում է Ադրբեջանին հանձնվելիք իր տունը. Խանումը նման բան չի անում: «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը հեռախոսազրույց ունեցավ Խանում Թամրազյանի հետ: Հարցրինք, թե ճիշտ են այն տեղեկությունները, որ ինքը Իջեւանում բնակարան է գնել, կամ վարձակալել եւ իր տան համար պետությունից ինչքան փոխհատուցում է ստացել: Խանումին զայրացրին մեր հարցերը, նա ասաց, որ Կիրանցում է ապրելու, վագոն-տնակը դնելու է Կիրանցում, այնտեղ է բնակվելու: Նա նեղսրտեց, թե ինչու են բոլորը հետաքրքրվում իր անձնական հարցերով: Ասացինք, որ դրանք անձնական հարցեր չեն, այլ հայրենիքի տարածքների հանձման հետ կապված խնդիրներ: Խանումը իրեն դրամական փոխհատուցման, Իջեւանում բնակարան գնելու կամ վարձակալելու հարցերում հստակություն չմտցրեց, վերջում նշեց. «Այսքան որ պայքարեցի, ի՞նչ փոխվեց»:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՀՈՂ Է ԾԱԽԵԼ ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲՈՐԸ

Նախկինում բենզալցակայանում որպես վառելիքի լիցքավորող աշխատած, Դիլիջանի պետական քոլեջի շրջանավարտ, այժմ Եվրոպական համալսարանում հեռակա սովորող, անձնական գործում իր սեռը «արու» գրած, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝2021 թ. փետրվարի 26-ին Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված Դավիթ Սարգսյանը կասկածելի աճուրդներով, Դիլիջան քաղաքից՝Շուկայականից զգալի էժան գներով հողեր է օտարել Երեւանի, Վանաձորի, Իջեւանի բնակիչների: Այս անգամ Դավիթ Սարգսյանը Դիլիջան քաղաքից հող է ծախել իր հարազատ եղբորը՝ Սասուն Սարգսյանին: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ Դիլիջանի համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի՝ 2024 թ. մայիսի 2-ի թիվ 538-Ա որոշմամբ՝ 2024 թ. հունիսի 3-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 1650.0քմ հողամաս (Լոտ-38 (ՔՀ-24)) Դիլիջան քաղաքի, Թբիլիսյան խճղ. թիվ 11/4 հասցեում՝հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 11550000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 11550000 դրամ առավելագույն գնով հաղթել է Դիլիջան համայնքի, Հաղարծին գյուղի, 10-րդ փողոց, 1-ին փակուղու. թիվ 1 տան բնակիչ Սասուն Սարգսյանը, որի մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 8 արձանագրությունը: Ուշագրավ է, որ աճուրդում հողամասի մեկնարկային եւ առավելագույն գինը նույնն է՝ 11550000 դրամ: Ինչպես ջահել, ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը կասեր՝ «Կոռուպցիան, հո պոզով-պոչով կենդանի չէ՞, կոռուպցիան հենց սա է, որ կա»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԾՐԱԳԻՐ

ՏԵԽՆԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեց հայկական առաջին գեոպարկի ստեղծման ծրագիրը:

Սույն թվականի հունիսի 5-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ սեյսմաբանության, սեյսմակայուն շինարարության, բնական եւ տեխնածին աղետների հիմնախնդիրների խորհրդի նիստը: Նիստին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ, խորհրդի անդամները, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ԵՊՀ-ի, Վայոց ձորի մարզպետարանի ներկայացուցիչներ: Քննարկվեցին Հայաստանում գեոպարկի ստեղծման նախադրյալները:

ՀՀ ԳԱԱ Քիմիայի եւ Երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Լեւոն Թավադյանը, շեշտելով գեոպարկի ստեղծման կարեւորությունը, նշեց. «Գեոպարկը զբոսաշրջության տեսակ է: Այն կնպաստի տեղանքի ենթակառուցվածքի զարգացմանը եւ, ամենակարեւորը, հանրությունը տեղեկացվելու է այդ տարածքների երկրաբանական վտանգների մասին»:

Նիստի ժամանակ զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գեոդինամիկայի եւ երկրաբանական վտանգների լաբորատորիայի վարիչ, երկրաբանական գիտությունների դոկտոր Արա Ավագյանը:

Նա նշեց, որ գեոպարկերն աշխարհագրական տարածքներ են, որոնց հիմքում առանձնահատուկ տեսարժան, երկրաբանական ժառանգությունն է, որը զուգորդվում է պատմական, հնագիտական, մշակութային բաղադրիչներով: Աշխարհում գեոպարկերը դիտարկվում են որպես կայուն տնտեսական զարգացման եւ շրջակա միջավայրի պահպանության խթան:

«Գեոպարկերում կարեւորություն ունեցող բացառիկ երկրաբանական օբյեկտները եւ լանդշաֆտները կառավարվում են հետազոտական, պահպանման, կրթական եւ կայուն զարգացման ամբողջական հայեցակարգով՝ ընդգրկելով տեղական համայնքների ուժերն ու հնարավորությունները», - ասաց Արա Ավագյանը:

Վերլուծելով հարուստ երկրաբանական ժառանգությունը, ինչպես նաեւ գեոպարկերի ստեղծման միջազգային փորձը՝ առաջարկվել է ստեղծել ոչ թե ընդհանրական երկրաբանական հուշարձանների գեոպարկ, այլ՝ մասնագիտացված:

Գեոպարկը կընդգրկի տարածքներ հիմնականում Վայոց ձորի եւ Գեղարքունիքի մարզերից, փոքր հատվածներ կներառի նաեւ Կոտայքի եւ Արարատի մարզերից:

«ՀՀ տարածքը ենթակա է բազմաբնույթ երկրաբանական վտանգների ազդեցությանը: Ուստի երկրաբանական վտանգներով մասնագիտացված գեոպարկի ստեղծումը կունենա նաեւ պաշտպանական նշանակություն», - նշեց Արա Ավագյանը:

Նորաստեղծ հայկական գեոպարկը կառանձնանա նրանով, որ համեմատաբար սահմանափակ տարածքում կունենա երկրաբանական վտանգների տարբեր ոլորտներին վերաբերող օրինակներ՝ ակտիվ տեկտոնական խզվածքներ, սողանքներ, նորագույն հրաբխականություն, հիդրոթերմալիզմ, լճային տրանսգրեսիա, զանգվածային ոչնչացման մասին վկայող շերտագրություն եւ այլն:

«Այս հանգամանքը հայկական առաջին գեոպարկին կտա բացառիկություն, առավել եւս, որ ընտրության արդյունքում կունենա տարածաշրջանային եւ մի քանի միջազգային նշանակության երկրատեղանքներ», - ասաց Արա Ավագյանը:

Խորհրդի անդամները նշեցին, որ անհրաժեշտ է առաջարկվող տարածքում հիմնել ազգային գեոպարկ եւ ստեղծել կառավարող մարմին, որում կընդգրկվեն գիտնականներ, պետական կառույցների եւ համայնքների համապատասխան մասնագետներ:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Սույն թվականի հունիսի 7-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ Հատուկ նշանակության հիմնախնդիրների պրոբլեմային խորհրդի անդրանիկ նիստը: Քննարկմանը մասնակցեցին խորհրդի անդամները ՀՀ ԳԱԱ ինստիտուտներից, Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի մասնագետները, «Լոկատոր» ՓԲԸ եւ «ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ ղեկավարները:

Քննարկվեցին գիտական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի եւ ռազմարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների միջեւ գիտատեխնիկական համագործակցության, պաշտպանունակության ամրապնդմանը նպաստող գիտական ուղղությունների վերհանման եւ ներդրումային ծրագրերի ձեւավորման, փորձագիտական խորհրդատվության վերաբերյալ հարցեր:

Խորհրդի գործառույթները ներառում են Հանրապետության պաշտպանունակության ամրապնդմանն ուղղված հիմնահարցերի վերաբերյալ ներդրումային ծրագրերի ձեւավորման, վերլուծության, փորձագիտական եզրակացությունների, խորհրդատվությունների եւ առաջարկությունների տրամադրման հարցեր, պաշտպանունակության բարձրացմանը նպաստող գիտական ուղղությունների եւ թեմաների վերհանում, քննարկումների կազմակերպում եւ զարգացման առաջարկությունների մշակում, անվտանգության հիմնահարցերին վերաբերվող գիտական ուղղությունների եւ տեխնոլոգիական մշակումների հեռանկարների վերլուծություն, առաջարկությունների մշակում ու պետական մարմիններին ներկայացում:

ՀԱՊԹՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ամփոփվել են ԵՊՀ Ուսանողական խորհրդի հայտարարած մրցույթի արդյունքները: Մրցույթի երեսուն հաղթողները համապատասխան հավաստագրերը ստացել են գործընկեր «Կոնվերս» բանկի Գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանից «Կարաս գինիներ»-ում կազմակերպված միջոցառման ժամանակ:

Շնորհավորելով մրցույթի հաղթողներին՝Անդրանիկ Գրիգորյանն ասել է. «Ինչպիսին կդառնաք՝ դա առաջին հերթին Ձեր որոշումն է եւ կամքը՝ իրականացնելու ապագայի Ձեր տեսլականը: Այս տեսանկյունից «Կարաս գինիներ»-ում միջոցառման կազմակերպումը պատահական չէ: Էդուարդո Էռնեկյանը, կյանքի կոչելով Հայաստանում ներդրում կատարելու որոշումը, հեղաշրջում կատարեց հայկական գինեգործության ոլորտում: Այն, ինչ տեսնում եք, գինեգործության ոլորտում միջազգային լավագույն ավանդույթների, փորձառության ներդրման եւ գրագետ մոտեցման արդյունք է: Կրթվեք, եղեք գրագետ մասնագետ, ընդունեք որոշում եւ քայլ առ քայլ կյանքի կոչեք Ձեր երազանքը՝սա է մեր խորհուրդը Ձեզ»:

ԵՊՀ Ուսխորհրդի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին «Կոնվերս» բանկին եւ պարոն Գրիգորյանին՝ կարեւորելով աջակցությունը կրթությանը ոչ միայն ֆինանսական, այլեւ կրթական համատեղ նախագծերի իրականացման տեսանկյունից:

Հավաստագրերի հանձնմանը հաջորդեց հյուրասիրություն եւ շրջայց խաղողի այգիներում ու գինու գործարանում:

Նշենք, որ մրցույթը հայտարարվել էր ԵՊՀ Ուսխորհրդի 30-ամյակի եւ «Կոնվերս» բանկի 30-ամյակի միջոցառումների շրջանակում: Դրան մասնակցել են ԵՊՀ բակալավրի 1-3-րդ կուրսերի բարձր առաջադիմությամբ ուսանողները, ովքեր ներհամալսարանական ու արտահամալսարանական բարձր հասարակական ակտիվություն են ցուցաբերում:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 43 պատահար. 1 մարդ զոհվել է, 57-ը՝տացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԼԻԶԻՆԳ՝ 1% ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՈՎ

«Ակբա լիզինգի» եւ «Էսզեթ Ֆարմա» ընկերության համագործակցության շնորհիվ Հայաստանում գործող բժշկական եւ ատամնաբուժական ընկերություններն այսուհետ կկարողանան Եվրոպայից, Ճապոնիայից, Միացյալ Նահանգներից եւ Կանադայից բերված վերջին սերնդի բժշկական եւ ատամնաբուժական սարքավորումները ձեռք բերել «Ակբա լիզինգի» միջոցով՝տարեկան ընդամենը 1% տոկոսադրույքով:

««Ակբա լիզինգն» ու «Էսզեթ Ֆարման» համագործակցում են երկար տարիներ: Այսօր համագործակցության հուշագիր ստորագրեցինք «Էսզեթ Ֆարմայի» հետ, որը կամրապնդի մեր համագործակցությունը եւ մեր հաճախորդներին ավելի լավ եւ հետաքրքիր պայմաններով լիզինգի տարբերակներ կառաջարկի: Մասնավորապես՝ եվրոպական արտադրության էներգախնայող սարքավորումները հնարավորություն կլինի ֆինանսավորել տարեկան 1% տոկոսադրույքով եւ 10% կանխավճարով», - նշել է «Ակբա լիզինգի» գլխավոր տնօրեն Աղասի Գասպարյանը:

«Այսօր ստորագրեցինք հուշագիր մեր բազմամյա գործընկեր «Ակբա լիզինգի» հետ այն հույսով, որ կկարողանանք ատամնաբույժներին, ատամնատեխնիկներին եւ բժիշկներին առաջարկել ամենաժամանակակից եւ որակյալ սարքավորումները՝ հնարավորություն տալով նրանց այդ սարքավորումներով աշխատել եւ ընդունել հաճախորդներին», - նշել է «Էսզեթ Ֆարմա» ընկերության հիմնադիր տնօրեն Երեմ Սարգսյանը:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջակա միջավայրի նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման վարչության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ Կառավարության 07.03.2003թ. N217-Ն եւ 03.08.2023թ. N1332-Ն որոշումների պահանջների համաձայն՝ մշակվում է Հայկ Ղազարյանի՝ Արարատի մարզի Մասիս համայնքի Նորագյուղ գյուղի վարչական տարածքում ձկնաբուծական նպատակով «Ֆրեշ Ֆիշ» ՍՊԸ-ի ձկնաբուծական տնտեսությունից հեռացվող ջրերից 90,0 լ/վ ջրառ իրականացնելու ջրօգտագործման թույլտվության ստացման նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, որոնք կցանկանան ծանոթանալ փաստաթղթի մշակման աշխատանքներին եւ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17:00-ից - 18:00-ն դիմել ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին (հասցե՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ):

Ծանուցմամբ ներկայացված փաստաթղթի նախագծի նախնական տարբերակի վերաբերյալ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու դեպքում՝ փաստաթղթի քննարկումը տեղի կունենա 2024 թվականի հունիսի 12-ին՝ժամը 16:00-ին, հասցե՝Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

Շրջակա միջավայրի նախարարություն

ՆՈՐ ՇՈՒՆՉ

ԲԻԶՆԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

CaseKey ակադեմիայի բացումը նոր շունչ է խոստանում հաղորդել բիզնես կրթությանը Հայաստանում: Ակադեմիան իր դռները բացեց երիտասարդ մասնագետների եւ ուսանողների համար՝ նպատակ ունենալով զարգացնելու նրանց բիզնես հմտությունները եւ խթանել միջազգային համագործակցությունը:

CaseKey-ի համահիմնադիր Արշակ Կարապետյանի խոսքով՝ Ակադեմիան հնարավորություն կտա Հայաստանի կրթական համակարգին լինելու ավելի մրցունակ միջազգային ասպարեզում, ինչպես նաեւ կսահմանի նոր նշաձող այս ոլորտում:

Վստահելով CaseKey-ի թիմին եւ հաշվի առնելով տարիների արդյունավետ համագործակցությունը՝ Team Telecom Armenia-ն դարձել է Ակադեմիայի գործընկերը:

Team-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը հյուրերի հետ կիսվեց ընկերության IPO-ի իրականացման եւ խոսեց նման խոշորամասշտաբ նախագծերի ընթացքում թիմային աշխատանքի ու առաջնորդության կարեւորության մասին: Այնուհետեւ շնորհավորելով Ակադեմիայի հիմնադիրներին եւ ուսանողներին՝նա նշեց.

«Որպես տելեկոմ ոլորտի առաջատար ընկերություն՝ Team Telecom Armenia-ն շարունակելու է ներդրումներ կատարել կրթության մեջ եւ գործակցել առաջատար ընկերությունների ու կազմակերպությունների հետ՝ տրամադրելու լավագույն հնարավորությունները մեր երիտասարդներին»:

Ակադեմիան CaseKey մրցույթի կրթական բաղադրիչն է, որի ծրագիրը մշակվել է ԱՄՆ Հյուսիսային Կարոլինայի պրոֆեսոր եւ համալսարանի բիզնես խնդիրների լուծման թիմի գլխավոր մարզիչ Պիտեր Վերհալենի հետ համատեղ, ով նաեւ վարելու է ամբողջ կրթական ծրագիրը:

«Այս ծրագիրը Հայաստանի ուսանողներին կտա հնարավորություն զինվելու գլոբալ բիզնեսի վերլուծության հմտություններով, կատարելագործել իրենց փորձառությունը եւ կստեղծի նախադրյալներ վաղվա լիդերներ դառնալու համար:

Շնորհակալություն եմ հայտնում Team Telecom Armenia-ին ուսանողներին այս հնարավորությունը ընձեռելու համար»,- նշեց Պիտեր Վերհալենը:

Ակադեմիայի դասընթացներին մասնակցելու հետաքրքրությունն այնքան մեծ է եղել, որ կազմակերպիչները ավելացրել են նաեւ հեռավար դասընթացների ձեւաչափը: Երկամսյա ինտենսիվ ուսուցմանը նախատեսված 100-ի փոխարեն մասնակցելու է 190 ուսանող Հայաստանի տարբեր համալսարաններից: Պրոֆեսոր Վերհալենը աշխատելու է նաեւ տեղացի մարզիչների հետ՝ փոխանցելով իր միջազգային փորձը եւ կիսվելով արդյունավետ մարզչական տեխնիկաներով: Ծրագրի ավարտին թիմերը պետք է լուծեն իրական բիզնես խնդիր:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿ՝ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻՑ»

Կարեւորելով Հայաստանի տնտեսական ներուժի բացահայտումը, մարզերում բիզնեսի եւ անհատների համար նոր հնարավորությունների ստեղծումն ու դինամիկ զարգացումը՝ «Ամերիաբանկը» երկրորդ տարին անընդմեջ իրականացնում է հատուկ նախագիծ՝ նախատեսված մարզերում գործող ընկերությունների եւ անհատ աշխատակիցների համար: Արշավի շրջանակում այն ընկերությունները եւ անհատները, որոնք կդառնան «Ամերիաբանկի» հաճախորդ եւ կսկսեն իրենց աշխատավարձը ստանալ «Ամերիաբանկի» քարտով, կունենան մի շարք արտոնություններից օգտվելու հնարավորություն:

Մասնավորապես, մարզային ընկերությունները փաթեթի շրջանակում կարող են անվճար բացել ցանկացած արժույթի բանկային հաշիվներ, ստանալ Visa Business տեսակի անվճար քարտ, անվճար ակտիվացնել եւ կառավարել հաշիվները ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով: Ընկերության ղեկավարներին անվճար կտրվեն Visa Platinum եւ Visa Gold պրեմիում դասի, իսկ աշխատակիցներին՝ Visa Classic տեսակի աշխատավարձային քարտեր: Այդ քարտերով հնարավորություն կտրվի կատարելու անվճար կանխիկացում ՀՀ բոլոր բանկերի բանկոմատներից, իսկ քարտով անկանխիկ գործարքներ կատարելու դեպքում՝ ստանալ 1%՝ մինչեւ 3000 ՀՀ դրամ հետվճար:

«Մեզ համար առանցքային նշանակություն ունեն մարզերի համաչափ զարգացումն ու տնտեսական ակտիվությունը, բիզնեսին աջակցությունն ու մարզերի բնակիչների համար լավագույն պայմանների ստեղծումը: Նմանատիպ նախաձեռնությունների միջոցով մենք փորձում ենք առավելագույնս օգնել բիզնեսին բացահայտել իր ներուժը, գտնել զարգացման լավագույն ուղիները եւ նպաստել նրանց կայացմանը», - նշել է «Ամերիաբանկի» մասնաճյուղային ցանցի եւ կոնտակտային կենտրոնի ծառայության ղեկավար Անդրանիկ Խաչատրյանը:

Նշենք, որ մարզային աշխատավարձային հատուկ առաջարկը գործում է ոչ միայն իրավաբանական, այլեւ ֆիզիկական անձանց համար, որոնք աշխատում են մարզերում, ցանկանում են դառնալ «Ամերիաբանկի» հաճախորդ եւ ստանալ իրենց աշխատավարձը «Ամերիաբանկի» քարտով: Արշավի մանրամասները՝ բանկի կայքում:

Առաջարկից օգտվելու համար հաճախորդները պետք է մոտենան «Ամերիաբանկի» ցանկացած մասնաճյուղ մինչեւ սեպտեմբերի 30-ը ներառյալ: Մանրամասները՝ տեսանյութում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Աննա Նորիկի Շաբոյանս, 2022 թվականին Վարդենիսի տարածքում կորցրել եմ թիվ HM000176 դիպլոմս: Գտնողին խնդրում եմ զանգահարել 093 20 95 42 հեռախոսահամարով:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՖԻԼՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է

«ԼԻՆԵԼ ՄԱՐԴ. Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՄԱՆԻՖԵՍՏԸ»

Ռուբեն Վարդանյանի ընկերների կողմից պատրաստված, նրա հետ ճանապարհ անցած հայտնի անձանց միջոցով Ռուբեն Վարդանյան մարդուն, վիզիոներին բացահայտող, նրա գաղափարների ու ծրագրերի մասին պատմող՝ «Լինել մարդ. Ռուբեն Վարդանյանի մանիֆեստը» ֆիլմը բավականին մեծ ուշադրության է արժանացել ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Այն հնարավոր է դիտել այս հղումով՝ հայերեն եւ անգլերեն ենթագրերով:

Բացի ընկերների, գործընկերների պատմություններից, ֆիլմում ներկայացվում են հատվածներ Ռուբեն Վարդանյանի տարբեր հարցազրույցներից, որտեղ հիմնականում նա խոսում է իր նախաձեռնությունների եւ ծրագրերի, դրանք սկսելու շարժառիթների ու նպատակների մասին: Ֆիլմում խոսվում է նաեւ Հայաստանում իրականացված մի շարք ծրագրերի, մասնավորապես, «Տաթեւեր» ճոպանուղու եւ «Տաթեւի վերածնունդ» ծրագրի, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության, կրթական ծրագրերի մասին: Ուշագրավ է կրթության դերի մասին հենց Ռուբեն Վարդանյանի խոսքը, որը մեջբերվում է ֆիլմում. «Ինչ-որ փուլում ես հասկացա, որ մարդկության ապագան կախված է կրթությունից, որ դա կլինի աշխարհի հաջողության հիմնական տարրը: Եթե ես հավատում եմ, որ կրթությունն աշխարհի ապագան է, ապա նշանակում է, որ պետք է կրթության մեջ ներդնեմ իմ ժամանակը, ջանքերն ու փողը: Եվ այս առումով, սա միայն պարզապես բարեգործություն չէ: Ես վստահ եմ, որ սա այն ապագան է, որը իր հետ կբերի փոփոխություններ, այդ թվում, ընդհանուր առմամբ, հաջողակ հասարակություն»:

«Կրթությունը Ռուբենի առաքելություններից մեկն է այս աշխարհում»,- ասում են ընկերները: Իսկ Ռուբեն Վարդանյանի ամենակարեւոր առաքելությունը նրանք համարում են այն, որ Վարդանյանը միշտ ամեն ինչին նայում է՝ իրավիճակը բոլորի համար բարելավելու տեսանկյունից: «Նա առաքելություն ունեցող մարդ է:

Նա մշտապես մտահոգված է եղել ժողովրդի ճակատագրով: Այսինքն, նա միշտ ամեն ինչին նայել է՝ իրավիճակը բոլորի համար լավացնելու, մարդկանց կյանքը բարելավելու տեսանկյունից: Սա բացարձակապես մարդասիրական գործունեություն է: Այսինքն, նրա գործունեության մեջ չկա որեւէ «ընդդեմ» ուղերձ, նրա ուղերձը «հանուն է»: Ստեղծել, կատարելագործել, գտնել փոխզիջումներ»,- պատմել է Վարդանյանի գործընկեր Միխայիլ Բրոյթմանը:

«Նա իրեն նվիրել է մարդկանց ու ծառայությանը: Նա այն մարդն է, որը դա անում է ամբողջ կյանքում:

Ռուբեն Վարդանյանը, ինչ-որ պահի, լինելով բացարձակապես կայացած մարդ, որոշեց, որ այն ամենը, ինչ ունի, ինչ ստեղծել է եւ այլն, երկրորդական է, որ հարստությունն անցողիկ է, քանի որ կյանքում կան բաներ, որոնք սահմանում են քո գոյության իմաստը: Եվ նա հենց այդպես էլ վարվեց: Այդ ծառայությունը կարեւոր է, այն կյանքում առաջնային է: Ցավոք, սա շատ քչերն են հասկանում»,- նշել է կինոռեժիսոր Կարեն Գեւորգյանը:

Նախաբանում ֆիլմի հեղինակները նշում են. «Այս ֆիլմը մենք Ռուբենից գաղտնի ենք ստեղծել: Եթե նա իմանար այս գաղափարի մասին, հավանաբար մեզ խորհուրդ կտար, որ մեր ժամանակն ու ջանքերն այլ տեղում օգտագործենք, բայց այստեղ մենք չենք համաձայնի նրա հետ: Ռուբենի մասին այս հրաշալի մարդկանց պատմության միջոցով, նրանց, որոնց հետ ճակատագիրը նրան միավորել էր, մենք փորձեցինք ցույց տալ, թե ինչի կարող է հասնել մարդը, եթե նրա ներսում, ինչպես հենց Ռուբենն է ասում, միջուկային ռեակտոր է: Երբ այն ամենը, ինչ այդ մարդն ունի, ծառայեցնում է ուրիշների համար եւ հավատարիմ է մնում իրական մարդկային արժեքներին: Մարդկանց ծառայելու ցանկությունը, նրանց, ովքեր խիստ կարիքի մեջ են, դրդեց Ռուբենին տեղափոխվել Արցախ: Նա հիանալիորեն գիտակցում էր իր կայացրած որոշման բոլոր ռիսկերը, բայց այլ կերպ վարվել չէր կարող: Թե ինչ եղավ վերջնարդյունքում, բոլորս գիտենք»:

Ֆիլմը եզրափակվում է այս տարվա մայիսին «Ավրորա» մրցանակաբաշխության կապակցությամբ Ռուբեն Վարդանյանի՝ Բաքվի բանտից փոխանցված ուղերձով. «Ես վստահ եմ, որ միասին կարող ենք շատ բան անել՝ աշխարհը բոլորի համար ավելի լավ եւ ավելի բարի վայր դարձնելու համար: Ինչպես Մարգարիտ Բարանկիցեն է ասում. «Սերը միշտ հաղթում է»: Ուրեմն թո՛ղ հաղթեն սերն ու արժեքները: Եվ թող մենք բոլորս տանք ավելին, քան երբեւէ կարող ենք հուսալ, որ կստանանք դրա դիմաց: Եվ թող յուրաքանչյուր ոք հասնի դեպի լավը տանող մեծ փոփոխությունների»:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՀՈՒՍՈ ԱՌԱԳԱՍՏ»

ՀԱՐԹԱԿ՝ «ՆՈՐԵԿՆԵՐԻ» ՀԱՄԱՐ

Մեկնարկել է «Հուսո առագաստ» հեղինակային երգի միջազգային փառատոնը: Այս անգամ եւս փառատոնը կընթանա 3 փուլով՝ նախընտրական, ընտրական եւ սեւանյան:

Նախընտրական փուլի հայտերն ընդունվում են մինչեւ հունիսի 20-ը: Դիմել կարող են ինչպես հեղինակ-կատարողները, այնպես էլ այլ հեղինակների ստեղծագործությունները սեփական մեկնաբանությամբ կատարող անձինք: Նախնական ընտրությունն անցած հայտատուները կմասնակցեն ընտրական փուլին, որը կկայանա հունիսի 28-ին «Մետրո» թատրոնում: Համերգի ընթացքում ժյուրիի անդամները կընտրեն լավագույններին, որոնք եւ հնարավորություն կստանան մասնակցել փառատոնի սեւանյան փուլին: Մասնակիցների կացության եւ սննդի ծախսերը կապահովվեն փառատոնի կողմից:

Փառատոնի սեւանյան փուլը կներառի երկու համերգային օր եւ տեղի կունենա հուլիսի 19-ից 21-ը՝ Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղին հարակից «WishUp» հանգստյան գոտում:

Համերգներին կմասնակցեն ընտրական փուլի արդյունքում ձեւավորված 2024 թվականի, ինչպես նաեւ նախորդ տարիների «Լավագույն տասնյակների» ներկայացուցիչները, արտերկրից ժամանած հյուրերը եւ ավագ սերնդի արդեն հայտնի ու սիրված երգահանները: Հուլիսի 20-ի գալա համերգային ծրագիրը կամփոփվի հավաստագրերի, շնորհակալագրերի ու խորհրդանշական նվերների հանձնման հանդիսավոր արարողությամբ:

Փառատոնը կազմակերպվում է 2015 թվականից եւ նպատակն է հայտնաբերել սկսնակ հեղինակ- կատարողներին ու խթանել նրանց ստեղծագործական գործունությունը, տրամադրել բեմ, ինչպես նաեւ ստեղծել մշակութային միջավայր՝ հեղինակային երգի սիրահարների ու երգահանների միջեւ շփման համար:

Հիշեցնենք, որ փառատոնը կազմակերպել են «Սիվիլ արտ» մշակութային հասարակական կազմակերպությունը եւ Բարդերի ակումբը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՆԴԵՍ ԿԳԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՇԻ ՆԵՐՔՈ

Թենիսի WTA վարկանիշային աղյուսակի 78-րդ համար Էլինա Ավանեսյանը հանդես կգա Հայաստանի դրոշի ներքո:

Էլինա Ավանեսյանը ծնվել է Ռուսաստանի Պյատիգորսկ քաղաքում 2002 թվականին: WTA վարկանիշային աղյուսակում նրա ամենաբարձ տեղը եղել է 60-րդ հորիզոնականը՝2024 թվականի փետրվար ամսին: Օրեր առաջ ավարտված Ֆրանսիայի բաց առաջնությունում նա հասել է մինչեւ 4-րդ շրջան:

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԻ

Սաուդյան Արաբիան ներկայացնող «Ալ Իթիհադը» ստիպված է 30 միլիոն դոլար փոխհատուցում վճարել գլխավոր մարզիչ Մարսելո Գալյարդոյին եւ նրա շտաբի անդամներին, հայտնում է Marca-ն:

Ակումբն արգենտինացի մասնագետին գլխավոր մարզիչ էր նշանակել 2023/24 մրցաշրջանի ընթացքում, սակայն առաջնության ավարտից երեք տուր առաջ նրան պաշտոնանկ արեց:

Գալյարդոն նույնիսկ հեռացումից հետո շարունակել է մարզել «Ալ Իթիհադը», քանի որ մինչեւ 2025 թ. հունիսի 30-ը գործող պայմանագիր ունի եւ դրա խզման հարցում համաձայնության չի հասել ակումբի հետ:

Նոր մարզիչ նշանակելու համար «Ալ Իթիհադը» պետք է Գալյարդոյին ու նրա շտաբի բոլոր 7 անդամներին միասին 30 միլիոն դոլար փոխհատուցում վճարի:

Կողմերը պայմանագրի խզման համար դեռ որեւէ փաստաթուղթ չեն ստորագրել: 48-ամյա Գալյարդոն պատրաստվում է ակումբը մարզել նաեւ հաջորդ մրցաշրջանում:

«Ալ Իթիհադը» Սաուդյան Արաբիայի Պրո լիգայի ավարտված առաջնությունում 54 միավորով զբաղեցրել էր 5-րդ տեղը՝ չկարողանալով պաշտպանել չեմպիոնի տիտղոսը:

ՄԵՆԱՄԱՐՏ ԿԱՆՑԿԱՑՆԻ

Պրոֆեսիոնալ բռնցքամարտի 8 քաշային կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Մենի Պակյաոն հուլիսի 28-ին Super Rizin 3-ի շրջանակներում ցուցադրական մենամարտ կանցկացնի, հայտնում է մրցաշարի մամուլի ծառայությունը:

45-ամյա ֆիլիպինցու մրցակիցը կլինի այդ մրցաշարի կիսաթեթեւ քաշային կարգի գործող չեմպիոն, ճապոնացի 25-ամյա բռնցքամարտիկ Չիհիրո Սուզուկին: Մենամարտը տեղի կունենա Ճապոնիայի Սայտամա քաղաքում, բաղկացած կլինի երեք ռաունդից եւ կանցկացվի հատուկ կանոններով:

Պակյաոն մարզական կարիերան ավարտելու մասին հայտարարել էր 2021 թվականի օգոստոսին՝ կուբացի Յորդենիս Ուգասին պարտվելուց մեկ ամիս անց:

Ֆիլիպինցին պրոֆեսիոնալ ռինգում անցկացրել է 72 մենամարտ, տարել 62 հաղթանակ, պարտվել 8 անգամ եւ գրանցել 2 ոչ-ոքի:

● *Հունիսի 15-ին՝ժամը 19:00-ին, Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Վերջին ծաղրածուն» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝2000-4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ովքեր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք: Ո՞ւմ է տրվում առաջնահերթություն:

Սիրան Հակոբյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն: Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Ալիսա Հայրապետյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 272-րդ հոդված):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Բասկյան «Ռեալ Սոսյեդադի» կիսապաշտպան Արսեն Զախարյանը հեղինակավոր Transfermarkt-ի կողմից ընդգրկվել է ամենաթանկարժեք ռուսաստանցի ֆուտբոլիստների տասնյակում:

21-ամյա ֆուտբոլիստը 18 միլիոն եվրո տրանսֆերային արժեքով երրորդն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 8 + 12 +22 + 26
Կոտայքի լեռներ	+ 8 + 12 +23 + 26
Կոտայքի նախալեռներ	+ 15+ 17 +28 + 30
Գեղարքունիք	+ 10+ 13 +21 + 24
Լոռի	+ 9 + 13 +24 + 27
Տավուշ	+ 15+ 17 +28 + 31
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 +21 + 24
Արագածոտնի նախալեռներ	+ 15+ 18 +28 + 31

Արարատ	+ 16 + 18 +31 + 33
Արմավիր	+ 16+ 18 +31 + 33
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 18 +31 + 33
Սյունիքի հովիտներ	+ 18 + 22 +29 + 32
Սյունիքի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 28
ԼՂՀ	+ 13 + 14 +25 + 26
Երեւան	+ 23 + 25 + 29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **10.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*